ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14 սեպտեմբերի 2013

ՊԱԼԱՏԸ ԲՈԼՈՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆՆ Է

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Տիգրան Էդուարդի Աթանեսյան

Ինչո՞ւ եմ ես առաջադրել իմ թեկնածությունը՝

Վերջին տարիներին Պալատի գործունեության մեջ արմատացել են մի շարք բացասական երևույթներ, որոնց գոյությունը վտանգում է փաստաբանական ինստիտուտի հետագա կայացումը և զարգացումը Հայաստանում:

Դրանցից ամենացայտունները, թերևս, հետևյալներն են՝

- Պալատը փաստաբանների ճնշող մեծամասնության համար դարձել է միայն դրամարկղ, որտեղ պարբերաբար վճարվում է անդամավճարը և որևէ այլ կերպ այն փաստաբանների առօրյա խնդիրներին չի մասնակցում
- Պալատը որևէ կերպ չի պաշտպանում փաստաբաններին պետական մարմինների կամայականությունից, անգամ կոնկրետ գործերով, երբ առկա է դրա խիստ անհրաժեշտությունը, խուսափում է հրապարակայնորեն արտահայտվելուց
- Պալատը չի աջակցում երիտասարդ փաստաբաններին նրանց գործունեությունը ծավալելու հարցում
- Պալատը փաստացի սկսել է պատկանել մի փոքր խումբ «ընտրյալ» փաստաբանների, որոնք ունեն մենաշնորհային իրավունք մասնակցելու պալատի կառավարմանը
- Պալատը փաստացի չունի հեղինակություն պետական և այլ մարմինների մոտ՝ իրավական ոլորտին վերաբերող հարցերով կայացվող որոշումների քննարկման և ընդունման ժամանակ
- Պալատը չունի որևէ արդյունավետ համագործակցություն իշխանության օրենսդիր մարմնի հետ, Մարդու իրավունքների պաշտպանի հետ, չի նախաձեռնել և ավարտի չի հասցրել որևէ էական հարցի լուծում իրավական դաշտում
- Պալատը չունի միջազգային համագործակցության պարզ և հիմնավորված տեսլական անգամ հարևան երկրների համապատասխան կառույցների հետ, դեռ ավելին՝ միջազգային համագործակցությունը Պալատը պատկերացնում է միայն ՀՀ-ում գործող մի քանի կազմակերպություններից սակավագումար դրամաշնորհներ կորզելու մեջ
- Պալատի ֆինանսական գործունեությունը թափանցիկ չէ, պարզ չէ՝ ինչի վրա են ծախսվում անդամավճարի գումարները, ինչպիսի այլ եկամուտներ ունի այն և, եթե ունի, ապա ինչ նպատակով են դրանք տրամադրվում և ինչպես են ծախսվում
- Պալատը չի անցկացնում հեղինակավոր ֆինանսական աուդիտ կամ էլ դրա արդյունքները չեն հրապարակվում
- Պալատը փաստացի կախման մեջ է դրվել իշխանության մարմինների կողմից, ինչը և հանդիսանում է Պալատի հասարակական հնչեղություն ունեցող հարցերում որդեգրած բացահայտ պասիվության պատճառը, իսկ որոշ դեպքերում էլ փաստաբանների կողմից նախաձեռնվող համընդհանուր շահերից բխող քայլերին ուղղակի ընդդիմանալու պատճառը
- Պալատը փաստացի շատ վաղուց սպասարկում է մի խումբ անձանց շահեր. դրանք որևէ աղերս չունեն փաստաբանության շահերի հետ

Նման Պալատ մեզ պետք չէ, Պալատը պետք է լինի և յուրաքանչյուր փաստաբանինը առանձին և մեր բոլորինը միասին, այն պետք է պաշտպանի մեզ, պետք է լինի յուրաքանչյուրիս կողքին դժվար պահերին, պետք է միավորի մեզ՝ փաստաբանության համընդհանուր խնդիրները արդյունավետ լուծելու համար:

Ի՞նչ եմ անելու ես

Պալատի նախագահի ընտրվելու դեպքում՝

- Պալատի ֆինանսական գործունեությունը դառնալու է պարզ, նպատակային և թափանցիկ
- Պալատը մշտապես քննարկման առարկա է դարձնելու փաստաբանի մասնագիտական գործունեության նկատմամբ ոտնձգության կամ ապօրինի միջամտության բոլոր դեպքերը, բոլոր հնարավոր միջոցներով սատարելու է փաստաբանին՝ անկախ նրա կամ նրա վստահորդի քաղաքական հայացքներից, հասարակական դիրքից և այլ հանգամանքներից
- Պալատը մշակելու է երիտասարդ փաստաբանների գործունեություն սկսելուն նպաստավոր պայմաններ ստեղծելու ծրագիր, միջոցներ է ձեռնարկելու հանրային պաշտպանի գրասենյակի աշխատակիցների քանակը ավելացնելու ուղղությամբ՝ ոչ միայն պետական միջոցների հաշվին
- Պալատը նախաձեռնելու է լայն և նպատակային միջազգային համագործակցություն
- Պալատը ձեռնամուխ է լինելու ՀՀ պետական և այլ շահագրգիռ մարմինների հետ արդյունավետ և փոխշահավետ համագործակցությանը
- Փաստաբանական դպրոցը ենթարկվելու է բարեփոխումների՝ պարզ և հստակ է լինելու դասախոսների ընտրության մեխանիզմը, թափանցիկ է դարձվելու դրա ֆինանսական գործունեությունը
- Խստացվելու են որակավորման քննությունները. փաստաբան դառնալու հավակնորդների մասնագիտական ունակություններին ներկայացվող պահանջների նշաձողը բարձրացվելու է՝ իմ խորին համոզմամբ, փաստաբան դառնալը չպետք է լինի չափից դուրս դյուրին՝ փաստաբան լինելը ինքնին իրավաբանի առանձնահատուկ կոչում է և ոչ թե պահեստային տարբերակ այլ համակարգերում աշխատող իրավաբանների համար
- Փաստաբանների պալատի խորհրդի աշխատանքը դառնալու է հրապարակային՝ խորհրդի նիստերին ներկա գտնվելու իրավունք, որպես կանոն, պետք է ունենա ցանկացած փաստաբան. Խորհրդի կարևոր որոշումների նախագծերը պետք է տրամադրվեն փաստաբաններին և, անհրաժեշտության դեպքում, կազմակերպվի դրանց քննարկումը բոլոր շահագրգիռ փաստաբանների մասնակցությամբ. Խորհրդի նիստերը պետք է արձանագրվեն՝ ձայնագրման եղանակով:

Իմ կենսագրությունը՝

Ծնվել եմ 1975 թվականի օգոստոսի 19-ին Երևանում

1992թ. ավարտել եմ Երևանի Ֆ.Ձերժինսկու անվան թիվ 20 միջնակարգ դպրոցը

1992թ. ընդունվել եմ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ, որն ավարտել եմ 1997թ.

1997-1998թթ. ծառայել եմ ՀՀ Զինված ուժերում

1999-2000թթ. ծառայել եմ ՀՀ ՆԳՆ-ում որպես քննիչ

2000-2002թթ. աշխատել եմ Մարդկային զարգացման միջազգային կենտրոն ՀԿ-ում՝ որպես իրավախորհրդատու

2001 թվականի մարտի 15-ին ստացել եմ փաստաբանական գործունեության արտոնագիր՝ անդամակցելով Հայ փաստաբանների միջազգային միությանը

2002-2003թթ.՝ «Գրանթ Թորնթոն Ամիո» աուդիտորական ընկերության ավագ իրավախորհրդատու

2003-2006թթ.՝ «Օմզար» ՍՊԸ տնօրեն, որը եղել է ռուսական ՕՄԶ-Ուրալմաշ/Իժորա խմբի դուստր ընկերությունը

2006-2007թթ.՝ «Մետալլոն-Արմենիա» հարավաֆրիկյան ընկերության գլխավոր տնօրեն

2008թ.-ից աշխատում եմ իմ փաստաբանական գրասենյակում

Ամուսնացած եմ, ունեմ 3 երեխա՝ երկու որդի և մեկ դուստր